

ՀԱՎԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

„ՀՀ օրենքը կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին, սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի և հասարակական այլ ոլորտներում կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները ու կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները: Սույն օրենքի նպատակն է կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորմանն աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը:

Համաձայն „Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագրի,, 2011 թ. հունիսի 23-ին ՀՀ Տավուշի մարզպետի թիվ 42-Ա կարգադրությամբ ստեղծվել է գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողով: Հանձնաժողովի կազմում ընդգրկված են մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության, կրթության, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի աշխատակիցներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի հետ համատեղ պարբերաբար կազմակերպում է գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովների վերապատրաստում՝ հանձնաժողովների անդամների գենդերային կարողությունների հզորացման, գենդերային գիտելիքների բարձրացման նպատակով: Վերապատրաստման հերթական դասընթացը անցկացվեց ս/թ հոկտեմբերի 16-18-ը՝ ՀՀ Տավուշի մարզպետարանում: Վերապատրաստման դասընթացները կկրեն շարունակական բնույթ:

Մարզում գենդերային հիմնախսնդիրների լուծման գործընթացում մեծ է հատկապես համայնքների դերը: Համայնքի արդյունավետ կառավարում իրականացնելու համար կարևոր գործոն է հանդիսանում սեռերի

իրավահավասարությունը: Ներկայումս խնդիրը հիմնականում պայմանավորված է համայնքներում, մասնավորապես՝ գյուղական համայնքներում համայնքային կյանքի կազմակերպման գործընթացում կանանց ցածր դերակատարմամբ:

Համայնքներում՝ հատկապես հեռավոր գյուղական համայնքներում, արմատացած է այն կարծրատիպը, թե կնոջ տեղը խոհանոցն է և կինը պետք է զբաղվի միայն տնային տնտեսությամբ: Անհրաժեշտ է համայնքներում հաղթահարել կանանց մասին ձևավորված այս ավանդական մտածելակերպը և ձեռնարկել անհրաժեշտ քայլեր համայնքային հանրությանը գենդերային հավասարության վերաբերյալ ճիշտ իրազեկելու համար: Այսինքն, գենդերային հավասարություն նշանակում է հավասար իրավունքներ, հնարավորություններ ու պարտականություններ և այս դեպքում տղամարդն ու կինը ոչ թե նույնացվում են, այլ նրանց իրավունքներն ու հնարավորություններն են հավասարեցվում: Համայնքները, հանդիսանալով տեղական սոցիալական հիմնախնդիրների լուծման համար ձևավորված ինստիտուտ, պետք է լինեն մշակված պետական քաղաքականության իրականացման սպառողները, և գենդերային քաղաքականությունը առավել արդյունավետ է իրականացվում, եթե միաժամանակ համապատասխան արձագանք դիտարկվում է նաև տվյալ համայնքի կողմից:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա. ՄԱՐԿՈՍՅԱՆ